ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀԶՀ-ՊԸԾՁԲ-15/9 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «22» հունվարի 2016թ.

2016թ-ի հունվարի 19-ին և 21-ին՝ համապատասխանաբար ժամը 12:00-ին և 14:30-ին, Հայաստանի զարգացման հիմնադրամի գրասենյակում՝ ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 հասցեում, տեղի ունեցավ ՀԶՀ-ՊԸԾՁԲ-15/9 ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Լիլիթ	Գինոսյան	Հայաստանի զարգացման հիմնադրամի գործերի կառավարման բաժնի իրավաբան.
Ալեքսանդր	Նազարյան	Հայաստանի զարգացման հիմնադրամի գործերի կառավարման բաժնի կազմակերպատնտեսական հարցերով մասնագետ.

Հանձնաժողովի նիստին ներկա էր՝

Անի	Բազեյանը	Հայաստանի զարգացման հիմնադրամի գործերի կառավարման բաժնի գնումների մասնագետի ժ/պ :

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի երկու անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 35-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Լիլիթ Գինոսյանը, իսկ քարտուղարն էր՝ Անի Բազեյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՋՀ-ՊԸԾՁԲ-15/9 ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց և վերջիններիս կողմից ներկայացված հայտերի գնահատման մասին:

2. Մասնակիցների կողմից առաջարկված գների, առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին:

1. ՀՋՀ-ՊԸԾՁԲ-15/9 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Լիլիթ Գինոսյանը նշեց, որ գնման առարկայի 1-ին չափաբաժնի ընդհանուր (նախահաշվային) գինը կազմում է 2 000 000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի քարտուղար Անի Բազեյանը հայտնեց, որ՝

- ՀՋՀ-ՊԸԾՁԲ-15/9 ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձիք (այսուհետ՝ նաև մասնակիցները).

Հ/հ	Մասնակցի անվանում	Մասնակցի գտնվելու վայրը
1.	«ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, 0018, Խորենացի 47/7, բն. 46
2.	«ԲԻ-ԴԻ-Օ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, 0010, Վ. Սարգսյան 10, տարածք 114
3.	«ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, 0012, Վ. Վաղարշյան 8/1
4.	«ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, 002, Բուլվար-Պլազա բիզնես կենտրոն, Արամի 64
5.	«ԷՅ-ԷՆ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, Գյուլբենկյան 30/3, թիվ 129
6.	«ԷՅՎԻՍԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Մյասնիկյան 5/1
7.	«ԹՄ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, Ամիրյան 4/6

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- Մասնակիցները հայտերը պարունակող ծրարները կազմել և ներկայացրել են ՀՋՀ-ՊԸԾՁԲ-15/9 ծածկագրով պարզեցված ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) հրավերի (այսուհետ՝ հրավեր) պահանջներին համապատասխան.
- Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, բացառությամբ՝ «ԲԻ-ԴԻ-Օ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ի, «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի և «ԷՅՎԻՍԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ի, որոնց կողմից ներկայացված հայտերում առկա չեն հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, մասնավորապես՝ բացակայում է Հրավերի 2-րդ մասի 2.2.5 կետով սահմանված Հավելված 3.5-ը:
- Մասնակիցների կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին, բացառությամբ՝ «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի, որի կողմից ներկայացված հայտում ներառված գնային առաջարկը չի համապատասխանում Հրավերով սահմանված հայտերի ներկայացման վավերապայմաններին:

Որոշվեց՝

1. Լիլիթ Գինոսյանի և Անի Բազեյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրորվ՝ առաջարկելով «ԲԻ-ԴԻ-Օ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին և «ԷՅՎԻՍԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:
3. «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

Կողմ՝ 2
Դեմ՝ 0

2. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ, ԱՌԱՋԻՆ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովն արձանագրեց, որ մասնակիցները ներկայացրել են հետևյալ գները՝ առանց ԱԱՀ.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Մասնակիցների առաջարկած գները՝ (ՀՀ դրամ)
		Չափաբաժին 1
1.	«ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ	700 000
2.	«ԲԻ-ԴԻ-Օ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	2 500 000
3.	«ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ	5 140 000
4.	«ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ	575 000
5.	«ԷՅ-ԷՆ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ	816 000
6.	«ԷՅՎԻՍԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ	620 000
7.	«ԹՄ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ	2 500 000

Հիմք ընդունելով այն, որ «ԲԻ-ԴԻ-Օ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ն և «ԷՅՎԻՍԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ն մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել են սույն արձանագրությունում նշված անհամապատասխանությունը՝

Որոշվեց՝

1. Որպես ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ ճանաչել հետևյալ ընկերություններին.

Մասնակցի	
Անվանումը	Զբաղեցրած տեղը
«ԷՅՎԻՍԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ	1-ին
«ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ	2-րդ
«ԷՅ-ԷՆ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ	3-րդ
«ԲԻ-ԴԻ-Օ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	4-րդ
«ԹՄ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ	4-րդ
«ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ	5-րդ

Կողմ՝ 2
Դեմ՝ 0

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին

Որոշվեց՝

Հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 49-րդ կետով սահմանված փաստաթղթերը հանձնաժողովի քարտուղարի կողմից հանձնաժողովի անդամներին տրամադրվելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 11:00-ին:

Կողմ՝ 2
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Լ. Գինոսյան _____

Հանձնաժողովի անդամ՝

Ա. Նազարյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Բազեյան _____